ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2026թ. թիվ 221-Ա

Ս.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՁՅՈՒՆԱՇՈՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի ապրիլի 3-ի թիվ 220-Ա որոշումը և հաշվի առնելով Ս.Աբրահամյանի համաձայնագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Սյուզաննա Աբրահամյանին՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «ՀՀ Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի պարտականությունների իրականացման համար Սյուզաննա Աբրահամյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 6-ից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. ապրիլի 3
ք.Վանաձոր